Թոնդրակեցիների շարժումը Թ-ԺԱ. դարերում

ՎԱՐԴԳԵՍ ՀԱՄԱԶԱՍՊԵԱՆ

Միջնադարեան հայ աղանդաւորական շարժումների մասին բազմաթիւ գրքեր, ուսումնասիրութիւններ են գրուել։ Այդ շարժումները հետազօտողները գրանք դիտել են որպէս սոցիալական շարժումներ, որոնք ուղղուած են եղել տիրող աւատապետական ճնշման դէմ։ Միանգամայն հասկանալի է, որ ժամանակի պատմիչները չէին կարող գրել այդ շարժումների գաղափարախօսութեան ու նպատակների մասին, սակայն միաժամանակ չէին կարող չնկատել ժողովրդական այն յուզումներն ու բողոքները, որոնք ուղղուում էին ժամանակի տիրող կարգերի դէմ։ Ուստի մեզ հասած աղբիւրների եւ նրանցում պահպանուած հատ ու կենտ տեղեկութիւնների հիման վրայ գրուել են բազմաթիւ գրքեր, ուսումնասիրութիւններ։ Թոնդրակեցիների մասին եւս գրուել են բաւականին ուսումնասիրութիւններ, ե՛ւ անցեալում, ե՛ւ սովետական շրջանում, սակայն այդ ուսումնասիրութիւններից եւ ոչ մէկը առանձին գրքով լոյս չի տեսել։ Սոցիալական այդ շարժման մասին սկզբնաղբիւրներից կարելի է յիշատակել «Գիրք Թղթոց»ը, Ան. Նարեկացու «Գիր-Խոստովանութիւնը», «Կանոնագիրք Հայոց»ը, Գր. Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» համապատասխան գլուխը ուղղուած Թոնդրակեցիների եւ մանիքեցիների դէմ, Արիստակէս Լաստիվերտցու «Պատմութեան» մի քանի գլուխները, Ստեփանոս Տարօնեցու (Ասողիկ) «Պատմութիւն Տիեզերականը» եւ բազմաթիւ այլ գործեր, որոնց մէջ եղած յիշատակութիւնները ասում են, որ այդ շարժումը մեծ ծաւալում է ունեցել եւ իր դեմոկրատական գաղափարներով վարակել ոչ միայն գիւղացիներին, այլեւ մտաւորականութեան շատ ներկայացուցիչների։

ԺԱ. դարի պատմագիր Արիստակէս Լաստիվերցին գրում է, որ նրանց, այսինքն թոնդրակեցիների գաղափարների եւ գործերի շարադրանքը վտանգաւոր է «զի ոչ ամենայն ոք պնդակամ է լսել էօք» եւ շատերը կարդալով այն կարող են հետեւել նրանց գաղափարներին։

Թոնդրակեցիների գաղափարների ճշմարտութեան ուժն իմանալու համար, անհրաժեշտ է դիտենալ այն ժամանակաշրջանն ու պայմանները, որոնք պարարտ հող ստեղծեցին ու ծնունդ տուին առաջաւոր այդ գաղափարներին։

Պատմութիւնից յայտնի է, որ 885 թուականին Հայաստանում հաստատւում է Թագաւորական մի նոր հարստութիւն, որը տեւում է շուրջ հարիւր վեցսուն տարի, եւ որի տիրապետութեան շրջանում Հայաստանն ապրում է տնտեսական զարգացման մի նոր շրջան։

Այդ շրջանը, հայ պատմութեան առանձին հետազօտողներ, համարում են հայկական աւատապետութեան ծաղկման շրջան, իսկ ուրիշները չմերժելով այդ հանգամանքը, միաժամանակ նկատում են Հայաստանի ընկերային–տնտեսական կեանքում մի շարք երեւոյթներ, որոնք աւատապետութեան քայքայումն են ցոյց տալիս։ Ժամանակակից աղբիւրների բոլոր վկայութիւնները հաւանական, ուշագրաւ ակնարկներ են, եւ նշում են որ այդ շրջանում Հայաստանի տնտեսական կեանքը վերակառուցւում էր նոր հիմքերի վրայ։ Կարելի է, հետեւապէս, ենթադրել որ բագրատունիների շրջանի քաղաքների արագ բարգաւաճումը, առեւտրի ու արդիւնաբերութեան զարգացումը, «հարուստ եւ ազդեցիկ հայ առեւտրական ու բուրժուական դասակարգի աստիճանական զարգացումը», ինչպէս ասում է ակադ. Ց. Մանանդեանը, «Հայաստանում եւս հետզհետէ նպաստելու էին տնտեսական, սոցիալական ու քաղաքական նոր յարաբերութիւնների առաջացման, եւ միանգամայն հնարաւոր է, որ այստեղ եւս ֆէոդալիզմը քայքայուէր ներքուստ, եթէ Բագրատունեաց Հայաստանի զարգացման այս ընթացքը չընդհատուէր սելջուկեան արշաւանքների ժամանակ»(1)։

Բագրատունիներու տիրապետութեան ժամանակաշրջանը հետաքրքիր է ոչ միայն իր տնտեսաձեւով, այլեւ իր քաղաքական իւրայատկութեամբ։ Աւելի քան 160 տարիների ընթացքում, չնայած բագրատունիների բոլոր ջանքերին, հայ ժողովուրդը չմիաւորուեց մէկ միասնական պետութեան մէջ, այլ մնաց բաժանուած մի շարք անջատ իշխանութիւնների ու էմիրութիւնների միջեւ։ Դեռ բագրատունիներու տիրապետութեան առաջին տասնամեակներում

1) Հ. Մանանդեան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երեւան, 1934, էջ 268։

մենք տեսնում ենք իրենց ունեցուածքով ու քաղաքական դիրքով թագաւորական տան հաւասար այնպիսի նախարարական տներ, ինչպիսիք էին արծրունիները, սիւնիները: Նրանք ոչ միայն մըրցում, այլեւ յաճախ օգտագործելով թագաւորական տան թուլութիւնը, անջատւում էին նրանից եւ կազմում էին ինքնուրոյն թագաւորութիւններ: Անշուշտ, սխալ կը լինէր կարծել, թէ բագրատունիներին իրենց տիրապետութեան որոշ շրջաններում չի յաջողուել սանձել երկրի կեդրոնախոյս ուժերին, ենթարկել նրանց թագաւորական իշխանութեանը: Մեր պատմական աղբիւրներում պահպանուել են բաւարար քանակութեամբ վկայութիւններ, ըստ որոնց բագրատունիները շատ յաճառ պայքար են մղել ինչպէս օտար նուաճողների, այդպէս էլ երկրի առանձին նախարարական տների դէմ՝ ուժեղ, կեդրոնաձիգ պետութեան ստեղծման համար:

Զարմանք է անտեսել, որ եղել են այնպիսի շրջաններ, երբ ուժեղացել է բագրատունիների գերիշխանութիւնը, մեծացել արծրունիների կախուածութիւնը բագրատունիներից, Սիւնիքի իշխանները ճանաչել են նրանց գերիշխանութիւնը, Տայքը եւ Վանանդը հնազանդութիւն են յայտնել, իսկ արաբական առանձին էմիրութիւններ, նոյնիսկ հարկ են վճարել Շիրակի բագրատունիներին: Անտարակուսելի է, որ բագրատունեաց թագաւորութեան հենց այդ ժամանակաշրջանում, չնայած ծանր շահագործման եւ արտաքին ու ներքին պատերազմների սպառնալիքներին, հայ ժողովուրդն ապրել է տնտեսական ու մշակութային կեանքի համեմատաբար բարենպաստ ու խաղաղ ժամանակամիջոցներ եւ կարողացել են կարճ ընդմիջումներով շունչ քաշել խաղաղ երկնքի տակ:

Այդ կարճատեւ ժամանակաշրջանները բարերար ազդեցութիւն են ունեցել երկրի տնտեսական ու մշակութային կեանքի զարգացման վրայ:

Մեզ հասած պատմական աղբիւրներից պարզ երեւում է, որ բագրատունիների տիրապետութեան շրջանում ժողովրդի հիմնական զբաղմունքը մնում էր հողագործութիւնը, բայց այդ բնագաւառում եւս նկատելի են աչքի ընկնող փոփոխութիւններ: Թ.—ԺԱ. դարերում գիւղատնտեսութիւնը բաւականին առաջադիմել էր: Հայկահատիկի կողքին արդէն նկատելի է նոր կուլտուրաների՝ բամպակի, բրինձի, կտաւատի, խաղողի եւ տեխնիկական այլ բոյսերի լայն տարածումը: Հանդէս է գալիս նաեւ շերամապահութիւնը, զարգացում է ապրում անասնապահութիւնը, առանձնապէս ոչխարաբուծութիւնը, որը հարուստ հիմք էր ստեղծում բրդի մշակութեան համար:

Գիւղատնտեսութեան հետ զարգացում է ապրում նաեւ արհեստագործութիւնը։ Բնորոշը այս շրջանում այն է, որ արհեստը անջատւում է գիւղատնտեսութիւնից եւ դառնում բաւականին պատկառելի թուով մարդկանց համար հիմնական զբաղմունք։ Ակադեմիկոս Մառի Անիում կատարած հնագիտական պեղումներն ու ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ արհեստների շատ ճիւղեր հասել էին իրենց կատարելութեան եւ այդ ճիւղերի արտադրանքը դարձել էր ոչ միայն ներքին, այլեւ արտաքին շուկայի ապրանքի առարկայ։

Հայ եւ օտար պատմիչների վկայութիւնից պարզւում է, որ Հայաստանում առանձնապէս զարգացած է եղել մետաքսագործութիւնը, զորգագործութիւնը, ջուլհակութիւնը, արծաթագործութիւնը, պղնձագործութիւնը։ Անիում յայտնաբերուած մի շարք արհեստաւորական թաղամասերը ցոյց են տալիս, որ Թ.—ԺԱ. դարերում հայ արհեստաւորները արդէն ունէին իրենց կազմած համքարութիւնները։

Արաբական աղբիւրների վկայութեամբ Հայաստանում արագ զարգացում է ապրել մանածագործութիւնը։ Դուինը հռչակուած էր իր նուրբ գործուածքներով, միջնադարեան առեւտրի կեդրոն Տրապիզոնում՝ ճանաչում էին գտել հայկական մետաքսեայ նուրբ գործուածքները եւ յատկապէս դիպակը։ Մանածագործութեան եւ գորգագործութեան զարգացմանը մեծապէս նպաստում էին նաեւ արդէն լայն չափերով օգտագործուող հայկական բնական ու արհեստական ներկերը, մասնաւորապէս որդան կարմիրը։ Այս շրջանում նկատելի առաջընթաց է ապրում հանքագործութիւնը՝ արծաթի եւ պղինձի մշակումը։ Արհեստների զարգացումը պայմաններ է ստեղծում ապրանքափոխանակութեան եւ առեւտրական յարաբերութիւնների ծաղկման։ Հայաստանի վրայով անցնող միջազգային նշանակութիւն ունեցող ճանապարհի ողջ երկարութեամբ ծաղկում են առեւտրի եւ արտադրութեան խոշոր կեդրոններ՝ Անին, Կարսը, Դուինը, Արծնը եւ մի շարք այլ քաղաքներ։ Գտնուելով արեւելքից-արեւմուտք տանող առեւտրական ճանապարհին, Անին դարձաւ միջազգային տարանցիկ-տրանզիտ առեւտրի կեդրոն եւ կարճ ժամանակամիջոցում ճանաչուեց որպէս «Տիեզերահռչակ» քաղաք։ Կարինն ու Արծնը նոյնպէս դարձել էին վաճառաշահ կեդրոններ։ Արիստակէս Լաստիվերտցին Կարսի մասին գրում է. «Հարբստացեալք բազում ընչեղութեամբ 'ի ծովէ եւ 'ի ցամաքէ ամբարեալ»(2)։

---

2) Ա. Լաստիվերտցի, Պատմութիւն, Թիֆլիս, 1912, էջ 78, 91։

Հետաքրքրական են նաեւ այդ քաղաքների բնակչութեան մասին մեզի հասած թուական տուեալները։ Թովմաս Արծրունու վկայութեամբ՝ 853 թ. երկրաշարժից Դուինում զոհուել է 70 հազար բնակիչ։ Գէորգի Կեդրինի տեղեկութիւններով Արծնը դրաւելու ժամանակ սելճուքները 1049 թ. ոչնչացրել են 140 հազար մարդ։ Որոշ տուեալների համաձայն Անիում բնակիչների թիւը այդ տարիներին 100 հազարից պակաս չպէտք է լինէր։ Բնակչութեան՝ արհեստաւորների եւ առեւտրականների կեդրոնացումը քաղաքներում պահանջ էր դնում նոր բնակելի տարածութիւնների, արհեստանոցների, առեւտրական շէնքերի եւ այլ կառոյցների։ Քաղաքների ստեղծման ու զեղեցկացման գործում մեծ դեր էին կատարում արհեստաւորներն ու առեւտրականները։

Քաղաքներում ապրող հայ ազնուականութեանը, հոգեւորականութեանը, մանր հողատէրերի եւ առեւտրականների նիստուկացը, կենցաղը, սովորութիւնները, նոյնիսկ հանդերձանքը յարմարեցնում էին իրենց ունեցուածքին։ Հաղնում էին դիպակ, մետաքսէ պատմուճաններ՝ ոսկեթել ասեղնագործերով։ Շքեղ են եղել նաեւ տնային կահ-կարասիները, զորգերը, բազմոցները, վարագոյրները։ Իշխաններն ու ազնուականները կրել են զեղեցիկ արծաթապատեան սրեր, որոնց մեծ մասը պատրաստում էին տեղական արհեստաւորների ձեռքով։

Թ. դարի վերջին եւ Ժ. դարի ամբողջ ընթացքում երկրի հարստութիւններն ու նիւթական կարողութիւնները կեդրոնանում էին մի կողմից խոշոր կալուածատիրութեան, իսկ միւս կողմից առեւտրական դասի ձեռքում։ Հանդէս է գալիս դրամական տնտեսութիւնը, դրամն այս շրջանում դառնում է մի տեսակ աստուած. «Եւ յարդի եղեւ արծաթասիրութիւն քան զաստուածասիրութիւն, եւ մամոնայն քան զԳրիստոս...»(3)։

Հարստութեան դիզման, շուայտ ու փարթամ կեանքի համար կրկնապատկւում է աշխատաւորութեան շահագործումը։ Մեծ ծաւալ է ստանում խաբեբայութիւնը, գողութիւնը, կաշառակերութիւնը, վաշխառութիւնը։

«Իշխանք սորա գողակիցք եղեն գողոց – գրում է Լաստիվերտցին Արծն քաղաքի մասին –, դատաւորք սորա կաշառառուք և վասն կաշառաց գողանային զիրաւունս...»(4)։

Հողը եւ երկրի հարստութիւնները վաշխառութեան, գողութեան, կաշառակերութեան եւ այլ ճանապարհներով կեդրոնանում

---

3) Ա. Լաստիվերտցի, էջ 79։

4) Նոյն տեղը, էջ 79։

են ոչ միայն վաշխառուների, առեւտրական դասի, ազնուականութեան, այլեւ եկեղեցու եւ եկեղեցականների ձեռքում:

Հողեւորականութիւնը, «հողու փրկութեան» քաղի տակ մեծ միջոցներ, եւ առաջին հերթին կալուածներ ու շինականներ էր ձեռք բերում իշխաններից ու մեծատուն առեւտրականներից, եւ իր նիստ ու կացով ու կենցաղով ետ չէր մնում իշխող խաւերից: Ժ. դարում մեծ ծաւալ է ստանում վանքաշինութիւնը: Աբաս թագաւորի օրոք կառուցւում են Կամրջաձորի վանքը՝ Արշարունիքում, Հոռմիսի դպրեվանքը՝ Շիրակում, Խլաձորի վանքը՝ Դերջանում, Հնձոցի, Ցախաձքարի, Տաթեւի, Նարեկի եւ բազմաթիւ այլ վանքեր: Աշոտ Երկրորդի ժամանակ կառուցւում են Հաղբատի եւ Սանահինի վանքերը: Վանքերի կառուցմանը զուգընթաց աճում է նաեւ վանականների թիւը, նրանք խմբերով լցւում էին եղբայրանոցները եւ նոր բեռ դառնում աշխատաւորութեան վրայ: Վանքի կամ եկեղեցու ունեցած կարողութիւնն ու ազդեցութիւնը այս շրջանում չափւում էր ոչ միայն նրա ունեցուածքով, կալուածների ու շինականների քանակով, այլեւ վանականների թուով: Տաթեւի վանքի միաբանութիւնն բաղկացած է եղել հինգ հարիւր եղբայրներից: Նուիրատուութիւնների, գնումների, առեւտրի ու վաշխառութեան միջոցով եկեղեցին իր ձեռքում էր կեդրոնացնում ոչ միայն հողային մեծ տարածութիւններ, այլեւ խոշոր դումարներ:

Գիւղացիների տեղահանման, վանքերի կողմից նոր հողային տարածութիւնների գնման ու նուիրատուութիւնների վերաբերեալ հարուստ տեղեկութիւններ է հաղորդում Ստեփանոս Օրբէլեանը: Պատմիչները բազմաթիւ տեղեկութիւններ հաղորդում են ոչ միայն նուիրատուութեան, այլեւ վանքերի ու եկեղեցիների կողմից գիւղերի հողային տարածութիւնների, ջրերի ու անտառների գնման մասին: Ստ. Օրբէլեանը իր պատմութեան մէջ փաստաթղթեր է մէջբերում Յակոբ Եպիսկոպոսի կողմից 12·000 դրամով եւ մի պատուական զոհարով «վարարակ ջրի» (ջրանցք)՝ Ֆիլիպ իշխանից գնման մասին(5): Լիակատար տէրը դառնալով հողային մեծ տարածութիւնների եւ այդ մեծ ջրանցքի, Տաթեւի վանքը մի շարք գիւղեր գցում է տնտեսական հարկադրական կախման մէջ:

Օգտուելով եկեղեցիների եւ վանքերի տնտեսական ու իրաւական հզօրութիւնից՝ դրամ դիզելու, ինչպէս եւ հսկայական հողային տարածութիւններ գրաւելու մարմաջով են բռնւում նաեւ անհատ հոգեւորականներ, եկեղեցու բարձր պաշտօնեաներ: Խոշոր հողատէր ու կալուածատէր է եղել Պետրոս Գետադարձ կաթողիկո-

---

5) Ստ. Օրբէլեան, Պատմութիւն Նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 256:

սը (1019–1059 թթ.)։ Մատթ. Ուռհայեցու վկայութեամբ. «Ունէր կազմութիւն հայրենեաց՝ տուեալ ի թագաւորացն Հայոց՝ հինգ հարիւր դեղ անուանի եւ մեծանիստ եւ շահաւէտ ընտիր, ընտիր... (6)։ Կալուածքների հետ Պետրոսը կուտակում է նաեւ մեծ քանակութեամբ դանձ «քանզի – ինչպէս վկայում է Լաստիվերտցին –, յոյժ սիրող էր դանձուց Պետրոս»(7)։

Նկարագրելով սելճուքների եւ թուրքերի կողմից Արծն քաղաքի գրաւումն ու կողոպուտը, Մատթէոս Ուռհայեցին տեղեկութիւններ է հաղորդում քոռ եպիսկոպոս Դաւթակի ունեցուածքի մասին։ Լինելով գաւառատեսուչ, նա անազնիւ, խարդախ ճանապարհներով կուտակել էր հսկայական նիւթական միջոցներ։ Դաւթակը բացառութիւն չէր, հարիւրաւոր դաւթակներ հողերի գրաւման, գիւղացիութեան ծանր շահագործման գնով ձեռք էին բերում մեծ հարստութիւններ։ Երկրի ներսում պատրաստուող եւ հեռաւոր երկրներից ստացուող թանկ ու շքեղ առարկաներով հեղեղուած շուկան պահանջում էր մեծ միջոցներ։ Գնման ու փոխանակման միջոցները՝ առաջին հերթին դրամը, դարձել էին պաշտամունքի առարկայ, նոր աստուած։

Դրամական տնտեսութիւնը փոխել էր մարդկանց հոգեբանութիւնը, նրանց մտածելակերպը, բարքերը։ Կալուածատէրերի ու հոգեւորականների հետ մէկտեղ չարաշահումների ու շահագործման առատ դուռ էր բացում նաեւ վաշխառուների ու առեւտրականների համար։

Խեղճ գիւղացուն գցելով իր ճիրանների մէջ, վաշխառուն աստիճանաբար քամում էր նրան, ստիպում վաշխի դիմաց տալ իր անասունները, ունեցուածքը, ողջ կարողութիւնը։

Այսպիսով, Թ. դարից սկսած Հայաստանի սոցիալ-տնտեսական յարաբերութիւններում նկատելի են մի շարք արմատական փոփոխութիւններ ու տեղաշարժեր։ Այդ նոր յարաբերութիւնների ոլորտում դասակարգային ու դասային հակամարտութիւնները այն աստիճան են սրւում, որ երկիրը յղի է դառնում սոցիալական բախումներով ու գաղափարական սուր դօտեմարտերով։ Բոլոր դասակարգերի առաջ ծառանում են հարցեր ու պահանջներ, որոնց լուծման ճանապարհը սոցիալական գործօն պայքարի, հնի պաշտպանութեան համար մղուող պայքարի ճանապարհն է։

Թ.–ԺԱ. դարերի Հայաստանի սոցիալ-տնտեսական կեանքում սրուել էին յարաբերութիւններն իրար հակառակ, հիմնականում

---

6) Մ. Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898 թ., էջ 153։

7) Ա. Լաստիվերտցի, էջ 89։

երկու բանակների միջև, աւատապետութեան բանակ (աղնուականութիւն, կղերականութիւն) եւ դեմոկրատական բանակ (առեւտրականութիւն, արհեստաւորութիւն եւ գիւղացիութիւն)։

Այդ երկու իրարամերժ բանակները միատարր չէին, ներդասակարգային սուր բախումների առաջ հող էր ստեղծուել բանակներից իւրաքանչիւրի, եւ յատկապէս իշխող բանակի ներսում։ Այդ դասակարգային հակամարտութիւնները իրենց զգալ էին տալիս մերթ քօղարկուած ձեւով, միստիքական շղարշի տակ, մերթ աւատապետական յարաբերութիւնների ու դաղափարախօսութեան բացարձակ ժխտումով, իսկ երբեմն նաեւ զինուած, բայց տեղական մասշտաբի գիւղացիական ելոյթներով։

Աւելի քան հարիւր յիսուն տարի, Թ.–ԺԱ. դարերի ընթացքում, հայ աւատապետութեան բանակը ապրում էր ահ ու սարսափի մէջ գիւղացիական այն յուզումներից ու շարժումներից, որոնք աղանդաւորական դաղափարների քօղի տակ մղւում էին յանուն արդարացի սոցիալ–տնտեսական յարաբերութիւնների, գիւղացիութեան ծանր վիճակի բարելաւման, ազատ կեանքի ու ազատ մտքի։

Միջնադարեան գիւղացիական շարժումների հիմնադիրների եւ ղեկավարների մասին վստահելի, սոյգ տեղեկութիւններ մեզ չեն հասել։ Աւելի քան երկու հարիւր տարի շարունակուող ու ծաւալուող թոնդրակեցիների շարժման հիմնադիրն ու դաղափարախօսը, ըստ մեր բոլոր պատմիչների ու աղբիւրների, հանդիսանում է մի ոմն Սմբատ՝ Ծաղկոտն դաւառի Զարեհաւան գիւղից։

890–ական թուականներին, դալով Ապահունեաց դաւառի Թոնդրակ գիւղը, Սմբատ Զարեհաւանցին քարոզում է իր նոր դաղափարները, ուղղուած առաջին հերթին աւատապետական հասարակարգի բոլոր անարդարութիւնները սրբագործող, շահագործողներին հովանաւորող եկեղեցու եւ կղերականութեան դէմ։

Ի՞նչ դաղափարներ էր քարոզում Սմբատ Զարեհաւանցին։

Այս հարցին պատասխան տալու համար մենք ունենք հիմնականում երեք սկզբնաղբիւր, դրանք են՝ Գրիգոր Նարեկացու «Թուղթ Կճավայ վանքի միաբաններին», Գրիգոր Մագիստրոսի ծանօթ նամակները եւ Արիստակէս Լաստիվերտցու «Հայոց Պատմութիւն»–ը։ Օժանդակ աղբիւրներ են Ներսէս Շնորհալու «Թուղթ Ընդհանրական», Ստեփանոս Օրբէլեանի «Բան դիմադրական ընդդէմ Հերձուածոցն» աշխատութիւնը, Պօղոս Տարօնեցու դաւանաբանա-

կան դրուածքն ընդդէմ քաղկեդոնականութեան, եւ մի շարք այլ հեղինակների մօտ պահպանուած թռուցիկ տեղեկութիւններն ու ակնարկները։

Սկզբնաղբիւրների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ Սմբատ Զարեհաւանցին եւ իր համախոհները իրենց պայքարի ամենասուր ծայրը ուղղում էին եկեղեցւոյ դէմ, որպէս աւատապետական կարգերի ամենից ամուր յենարանի։ Նրանք քարոզում էին հրաժարուել եկեղեցուն ենթարկուելուց, նրան հարկեր ու տուրքեր վճարելուց։

Այս յեղափոխական քայլը նրանց կողմից, ի հարկէ պէտք է հիմնաւորուէր տեսականօրէն, նրանք պէտք է հաշիւ տային իրենց հետեւորդներին կատարած գործի արդարացիութեան մասին։ Եւ որպէս կուռ աշխարհայեացք, կազմաւորում է թոնդրակեցիների հակաեկեղեցական ուսմունքը։

Սմբատ Զարեհաւանցին քարոզում է, որ ամէն մարդ լինելով ազատ ու անկաշկանդ, կարող է ազատ կամքով ընտրել իր կեանքի ճանապարհը՝ կամ համաձայն աստուածային օրէնքների, կամ ընդդէմ այդ օրէնքների։ Իւրաքանչիւր անհատ ինքն է պատասխանատու իր արարքների համար եւ առանց կողմնակի միջնորդութեան, այսինքն՝ առանց կղերականների օգնութեան, կարող է վաստակել անդրաշխարհային վայելքները ճաշակելու իրաւունքը։ Ուստի՝ եկեղեցին աւելորդ է։ Ուստի՝ անընդունելի են եկեղեցու խորհուրդները։

Մկրտութիւնը, որով մանուկն ընդունւում է եկեղեցու դիրքը, մի սովորական լուացում է եւ ոչինչ չունի խորհրդաւոր։ Աւազանը՝ սովորական ջրաման է եւ ոչինչով չի օգնելու կնքուողին թէ այս, թէ միւս աշխարհում։ Այս դրոյթից հետեւում է, որ եկեղեցին մկրտութեան պատուդրով այլեւս իրաւունք չպէտք է ունենայ դիրել հսկայական նիւթական արժէքներ ու դրամ։

Պսակի եւ ամուսնութեան մէջ նոյնպէս եկեղեցին իրաւունք չունի խառնուելու, այդ առիթով արուած ծէսերն ու արարողութիւնները անիմաստ են, հետեւաբար եւ աւելորդ։ Ամուսնութեան հիմքում պէտք է ընկած լինի զոյգերի փոխադարձ սէրն ու համաձայնութիւնը։ Այստեղից հետեւում է, որ եկեղեցու պաշտօնեաները զրկուելու են իրենց հասոյթների նաեւ միւս կարեւոր աղբիւրներից։

Հաղորդութիւնը եւ ողջ պատարագը դատարկ ու սնոտի արարողութիւններ են եւ ոչ մի օգուտ չեն բերում հաւատացեալներին։

Թոնդրակեցիների ղեկավարներից Կիւրեղը (ըստ Մխիթ. Ապարանեցու՝ Սմբատի անմիջական աշակերտներից մէկը(8)) վերցնելով հաղորդութեան խմորը թրջում էր հաղորդութեան գինու մէջ եւ դէն էր նետում ասելով. «Այդ է խարէութիւն քրիստոնէից»(9):

Աստծուն ձօնուող նուէրները (երախայրիք), մատաղը, հոգեհանդիսաը, հոգեդրամը միայն մէկ իմաստ ունեն, նրանց միջոցով եկեղեցու պաշտօնեաները հնարաւորութիւն են ստանում աւելի փարթամ ու շուայտ կեանք վարելու ի հաշիւ մոլորուած ժողովրդի, ուրեմն՝ պէտք չէ նուէրներ ու զոհաբերութիւններ կատարել: Թոնդրակեցիների ղեկավարներից մէկը ծաղրելով մատաղի սովորութիւնը, մատաղցու անասուններին դիմելով ասում է. «Ա՛յ տառապեալ չորքոտանի, թո՛ղ թէ նա (այն անձը, որի հոգու փրկութեան համար մատաղ էին մորթելու, Վ. Հ.) զիւր ժամանակն մեղս արար եւ մեռաւ, դու դի՞նչ մեղար, որ ընդ նմա մեռանիս»(10):

Նոյնպիսի դատապարտութիւններով նրանք ժխտում էին ձեռնադրութիւնը, ծնրադրութիւնը, եկեղեցում արուող աղօթքը, պահքը, եկեղեցական բոլոր ծէսերն ու արարողութիւնները:

Այսպիսով Սմբատ Զարեհաւանցին ժխտում էր եկեղեցու անհրաժեշտութիւնը: Սմբատի աշակերտ Կիւրեղը ուղղակի յայտարարում էր. «Աստուած ընդամենայն տեղիս է» եւ նրան պաշտելու համար չպէտք է մտնել եկեղեցի, չպէտք է պաշտել խաչն ու պատկերները, եկեղեցական զգեստներն ու անօթները, որովհետեւ. «մենք աստուածապաշտ ենք եւ ոչ թէ նիւթապաշտ»(11):

Այս բոլորից բխում է Սմբատի եւ նրա մերձաւոր հետեւորդների ուսմունքի ամենայեղափոխական դրոյթներից մէկը՝ պաշտօնական եկեղեցու ամբողջական ժխտումը ու հայ եկեղեցու սահմանադատուած, անկախ ու ուրոյն սկզբունքների վրայ խարսխուած համայնքների ստեղծումը:

Ժխտելով աւատապետութեան հլու սպասաւոր եկեղեցին, որպէս անարդարացի սոցիալ-տնտեսական յարաբերութիւնների կրողի եւ ստեղծելով թոնդրակեան գաղափարներն ընդունած ընտանիքների համայնքներ, բնական է, որ Սմբատ Զարեհաւանցու հետեւորդները պէտք է իրականացնէին այդ համայնքներում աւատապետական սոցիալ-տնտեսական իրականութեանը հակադիր դոյ-

---

8) Մխ. Ապարանեցի, Աղանդաւոր Հայք Թ.-ԺԵ. դարուց (տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 550):

9) Գր. Մագիստրոս, Թղթեր, էջ 157:

10) Ա. Լաստիվերտցի, էջ 147:

11) Գր. Մագիստրոս, Թղթեր, էջ 157:

քային եւ դասային յարաբերութիւններ։ Գրիգոր Մագիստրոսը ասորաց կաթողիկոսին ուղղուած թղթում պարսաւանքների ու լուտանքների հետ մէկտեղ յայտնում է, որ թոնդրակեցիների մօտ չը-կայ «խտրութիւն արանց եւ կանանց հող ընտանեաց»(12)։ Մագիստրոսը միաժամանակ գրում է, որ թոնդրակեցիները անդոսնում են պասն ու ամուսնութիւնը, «եւ զոր սիրով մերձենան յիրհարս կատարեալ սէր համարեն»։ Թոնդրակեցիները ասում են, որ «Աստուած սէր է եւ սիրով միաւորիչն կամի եւ ոչ զոպսակ»։ Միջնադարեան մի այլ հեղինակ խօսելով միջնադարեան աղանդաւորների եւ մասնաւորապէս թոնդրակեցիների մասին, յայտնում է, որ նրանք թոյլ էին տալիս կանանց «ելանել ի բեմն»։ Այս վկայութիւններից հետեւում է, որ թոնդրակեցիները կնոջ ու տղամարդու միջեւ ոչ մի տարբերութիւն չէին դնում եւ նրանց կապի միակ հիմքը համարում էին փոխադարձ սէրն ու յարգանքը։ Արդ, եթէ նրանք հաւասարեցնում էին կնոջն ու տղամարդուն իրենց իրաւունքներով, եւ օրէնքի ու Աստծու առաջ նրանց դիտում էին որպէս իրաւահաւասարներ, ապա բնական է ենթադրել, որ իրաւահաւասար էին համարում նրանք իրենց համայնքի բոլոր անդամներին։

Այս ծանօթութիւնից հասկնալի է դառնում, որ Մագիստրոսից բերուած տեղեկութիւնը, հակառակ հեղինակի ցանկութեան (Մագիստրոսի նպատակն է եղել տղամարդկանց եւ կանանց միջեւ տարբերութիւն չդնող թոնդրակեցիներին մեղադրել պոռնկութեան մէջ), դալիս է պարզելու թոնդրակեցիների համայնքի անդամների փոխյարաբերութիւնների եւ իրաւական վիճակի կնճռոտ հարցը։ Յատկապէս ուշադրաւ է այն փաստը, որ նրանք խտրութիւն չէին դնում ընտանիքների միջեւ։ Հետեւաբար, այս փաստի հիման վրայ կարելի է յանդել միայն մէկ եզրակացութեան, այն է՝ թոնդրակեան համայնքի մէջ մտնող ընտանիքներն ու անհատները իրաւահաւասար էին, ապրում էին տնտեսական սերտ համագործակցութեամբ եւ թերեւս իրականացրել էին տիրող աւատապետական կարգերի դէմ մղած մարտերում դիմացկուն ուժ ստեղծելու նախապայմաններից ամենագլխաւորը՝ արտադրական միջոցների հանրութիւնը։

Ճիշդ է, վերջին եզրակացութեան համար մեզ չեն հասել ուղղակի վկայութիւններ, սակայն եթէ նկատի ունենանք, որ Ստ. Լաստիվերտցին հրաժարւում է թոնդրակեցիների մասին մանրամասն տեղեկութիւններ հաղորդելուց, վախնալով, որ նրանց դաւաճարները վարակի նման կը տարածուեն ողջ աշխարհում, եթէ վեր-

12) Գր. Մագիստրոս, Թղթեր, էջ 160։

յիշենք այն արիւնահեղ եւ դաժան միջոցները, որոնցմով հայ աւատապետներն ու հայ եկեղեցին գործել են շարժման մասնակիցների դէմ, ապա կը համոզուենք, որ Թոնդրակեցիների մասին Լաստիվերացու եւ միւս մատենագիրների կողմից չհրապարակուած տեղեկութիւններն առաջին հերթին պէտք է հաստատէին նրանց համայնքների համակեցութեան այս արմատական յեղափոխական կողմը։

Այսպիսով Սմբատ Զարեհաւանցին ազատ սիրոյ եւ ազատ ամուսնութեան իր արմատական դաղափարով խախտում էր աւատապետական հասարակութեան ծնունդ՝ աւատապետական ընտանիքի հիմքերը եւ քարոզում սեռերի ու մարդկանց նոր փոխյարաբերութիւններ։

Մարդկանց իրաւունքների հաւասարեցման հետ միասին նա դնում էր ընտանիքների տարբերութիւնների վերացման, կամ որ միեւնոյն է, նրանց հաւասարեցման մի դաղափար, որի իրականացման նախապայմանը մասնաւոր սեփականութեան վերացումն ու համայնական սեփականութեան ստեղծումն էր։

Թոնդրակեցիները սոցիալական դրօշ բարձրացրին Թ.-ԺԱ. դարերում ընդդէմ հայկական աւատապետութեան եւ հայկական եկեղեցու, եւ այդ դրօշի վրայ դրեցին այն սոցիալական պահանջներն ու դաղափարները, որոնք թելադրում էր ինքը՝ հայկական ժամանակակից հասարակութիւնը, սոցիալ-տնտեսական իր սուր, անհաշտելի բախումներով։

Թոնդրակեցիների դաղափարական դրոյթները նախկին հերետիկոսական ուսմունքների համեմատութեամբ որակապէս նոր էին եւ թարմ։

Ինչպէս տեսանք, Սմբատ Զարեհաւանցին իր յեղափոխական դաղափարների քարոզչութիւնը սկսում է Ապահունեաց դաւառի Թոնդրակ(13) աւանում։ Կարճ ժամանակում նա գտնում է բազմաթիւ հետեւորդներ եւ դաղափարակիցներ։ Այդ դաղափարները տարածուեցին Հայաստանի բազմաթիւ (նոյնիսկ հեռաւոր) դաւառներում ու նահանդներում, ներթափանցեցին հարեւան երկիրները (Աղուանք, Վրաստան)։

Արդէն Ժ. դարից մենք ունենք վկայութիւններ, ու անժխտելի փաստեր Այրարատի, Սիւնիքի, Հարքի, Վասպուրականի, Մանանդի եւ այլ դաւառների, իսկ քաղաքներից՝ յատկապէս Խընուսի Թոնդրակեցիների, նրանց դաղափարների ազդեցութեան տակ

---

13) Թոնդրակ տեղանունը ստուգաբանում են կապելով Կոգովիտի եւ Ծաղկոտն գաւառների միջեւ գտնուող Թոնդորիկ լեռնանուան հետ, որը հայերէն «Թոնդիր» բառի միջոցով բացատրւում է որպէս հրաբխային խառնարան։

ընկուած դիւղացիական ելոյթների մասին։ Եւ ահա շարժումը դուրս գալով Թոնդրակի նեղ քարոզչական շրջանակներից, Ժ. դարի սկիզբին դառնում է զանգուածային շարժում, որն ընդգրկում է աշխատաւորական լայն խաւերի։

Այս շրջանում շարժման մասնակիցներին այլեւս չի բաւարարում դաղափարների միայն տարածումը կամ, ինչպէս ընդունուած է ասել՝ քարոզը։

Շարժման կողմնակիցներն ու մասնակիցները դիմում են արդէն գործնական քայլերի իրենց դաղափարների իրականացման համար։

Յովհաննէս Դրասխանակերտցին մեծ զայրոյթով է խօսում հայ եկեղեցու դէմ ընկուած դիւղացիական ելոյթների եւ ապըստամբութիւնների մասին, դրանք համարելով անհաւատ եւ անաստուած աւազակների ելոյթներ։ «Եւ ապա խառն ընդ նոսին եւս աւազակք եւ սրիկայք ելին 'ի մարտս ընդ երկրի մերում. եւ բազում ինչ այն էր՝ որ 'ի նմանէ անցք ընդ աստուածաշէն եկեղեցիս անցանէին, յեղծումն եւ 'ի խոպանումն եւ յապականումն վարակեալ»(14)։

Դրասխանակերտցու պատմութեան յաջորդ հատուածներում արդէն շատ պարզ է տրուած, որ մարտի դուրս եկածները ոչ աւազակներ եւ ոչ էլ սրիկաներ էին, այլ շատ հասարակ մարդիկ՝ տրեխաւոր դիւղացիներ (չարուխաւորներ)։ Նրանք բացարձակ ապստամբութեան էին դուրս եկել կալուածատէրերի ու եկեղեցիների դէմ եւ յայտարարում էին, թէ բաւական է, որքան մենք քայլեցինք տրեխներով, դուք երիվարներով, ժամանակն է որ դուք հաղնէք տրեխներ եւ ձիերը (աւելի ճիշդ կը լինի ասել իրաւունքները) յանձնէք հասարակ մարդկանց՝ աշխատաւորներին։ Դրասխանակերտցու վկայութիւնից պարզ երեւում է, որ դիւղացիների այս ելոյթը ոչ թէ աւազակային ինչ-որ պատահական յարձակում էր, այլ շատ լուրջ դիւղացիական ապստամբութիւն, որը կրում է Թոնդրակեցիների ազդեցութիւնը։

Պատմիչը ուղղակի կերպով վկայում է, որ ոտքի ելած «տրեխաւորները» ցանկանում էին խլել բոլոր տէրերի ու իշխանների կալուածները ու իրաւունքները, հաստատել նոր յարաբերութիւններ, ուր իշխելու էին իրենք՝ ընչազուրկ եւ իրաւազուրկ աշխատաւորները։

Հայաստանի իշխող դասակարդերը միասնական բանակ են կազմում ընդդէմ ժողովրդական ապստամբութեան եւ սրով ու հը-

---

14) Յով. Կաթողիկոս Դրասխանակերտեցւոյ, Պատմութիւն Հայոց, էջ 256-257։

բով, անասելի դաժանութեամբ ճնշում են թոնդրակեցիների շարժման առաջին կազմակերպուած ելոյթները։

Երկիրը դրկւում է աշխատաւոր ձեռքից, տնտեսութիւնը ապրում է քայքայում, իշխում է սովը, աղքատութիւնը, հալածանքն ու թշուառութիւնը։ Դրութիւնն աւելի է ծանրանում կրկնուող անտարբերութեան եւ համաճարակի պատճառով(15)։

Ուշադրաւն այն է, որ պատմիչը չի մոռանում շեշտել, որ երկրի այսպիսի ծանր ու դառն վիճակն արդիւնք էր ոչ թէ օտար թշնամիների արշաւանքների ու ասպատակութիւնների, այլ հայ հասարակութեան տարբեր շերտերի թշնամական բախումների ու սոցիալական կռիւների։

Յովհ. Դրասխանակերտցու տուեալները կասկած չեն թողնում, որ Ժ. դարի սկզբներին Հայաստանի սրտում՝ Այրարատում, յեղափոխական շարժումը աւատապետութեան դէմ արտայայտւում էր ամենամարտական ձեւով, որպէս բացարձակ զինուած ապստամբութիւն։ Բայց Այրարատը մենակ չմնաց. զինուած ելոյթներ ընդդէմ օրաւուր ուռճացող եկեղեցու՝ բռնկուեցին նաեւ Հայաստանի այլ դաւառներում, որոնցից յատկապէս նշանաւորներից են Սիւնիքի աշխատաւորութեան ելոյթները։

Ստեփանոս Օրբէլեանի «Պատմութիւն Նահանգին Սիսական» մեծարժէք աշխատութիւնը, ուր հաւաքուած են Ժ. դարից բազմաթիւ արխիւային փաստաթղթերի ու արձանագրութիւնների պատճէններ, հնարաւորութիւն են տալիս աւելի մանրամասնօրէն քննել գիւղացիական հերոսական այն ապստամբութիւնների ընթացքն ու պատմութիւնը, որոնք ողջ դարի ընթացքում ահ ու սարսափի մէջ էին պահում Սիւնիքի տիրող դասակարգին։ Թ. դարի վերջերին եւ Ժ. դարի սկզբներին Սիւնիքում կառուցւում եւ վերակառուցւում են բազմաթիւ վանքեր ու մենաստաններ (Սեւան, Նորավանք, Գաղեվազ, Տաթեւ եւ այլն)։ Այդ վանքերը՝ նուիրաբերումների ու գընումների միջոցով տէր են դառնում տասնեակ գիւղերի, ադարակների, ջրանցքերի, ջրաղացների, ձիթհանքերի եւ այլ շարժական ու անշարժ ունեցուածքների։ Հոգեւորականութիւնը իր կալուածքների վրայ բնակուող գիւղացիութեանը ծանր շահագործման ենթարկելով, կուտակել էր հսկայական հարստութիւններ եւ ձգտում էր օրըստօրէ էլ աւելի ընդարձակել իր կալուածքները։

Որպէսզի մօտաւոր գաղափար կազմենք, թէ ինչ հսկայական միջոցների տէր էին Սիւնիքի վանքերը, բաւական է ծանօթանալ Երասխի ափին Գիւտ եպիսկոպոսի կողմից կառուցուած վանքի հա-

---

15) Տես՝ Յոյնը, էջ 260։

բլստութեանը։ Վանքն ունէր 5 գիւղ, 1000 արջառ, 12·000 ոչխար, 700 ուղտ, 600 ձի, 400 էշ եւ մեծ թուով այգեպաններ ու բանուորներ։ Սիւնիքի վերոյիշեալ վանքը դեռ ամենահարուստներից չէր եւ իր ունեցուածքով շատ ետ էր մնում մեծ թուով այլ վանքերից։

906 թուականին աւարտւում է Տաթեւի վանքի վերաշինութիւնը։ Վանքի նաւակատիքին ներկայ են լինում շատ նշանաւոր իշխաններ ու բարձրաստիճան հոգեւորականներ։

Սիւնեաց դահերէց իշխան Աշոտը վանքին նուիրում է· «ըզ-ցօղունի գիւղ ի Հարանդ գաւառի եւ զԻնունիք ի Սիւնիս, ի Ծըղուկք գաւառի, շնորհէ եւ զՑուր բերդովն եւ ագարակօքն եւ զգետն Ցուրայ եւ զվանքն...»(16) եւ բազմաթիւ այլ կալուածքներ։ Նման նուիրաբերումներ իրենց հոգու փրկութեան համար կատարում են նաեւ միւս իշխաններն ու մեծահարուստները։ Միանգամայն հասկանալի է, որ գիւղացիութիւնը մեծ դիմադրութիւն է ցոյց տալիս եւ չի ցանկանում դառնալ վանքապատկան։ Եւ սկսում են տասնեակ տարիներ տեւող սուր պայքար վերոյիշեալ ու մի շարք գիւղերի (Շնհէր, Տանձատափ, Տամալէկ) ու Տաթեւի վանքին միջեւ։ Սիւնեաց մետրոպոլիտ եւ Տաթեւի վանահայր տէր Յովհաննէսը «բազում անգամ» փորձում է, բայց չի կարողանում «հալածել զբնակիչսն (Տամալէկայ) եւ սեփականել տեղին»։ Գիւղացիութիւնը կազմակերպում է դիմադրութիւն ընդդէմ եկեղեցու ու աշխարհիկ իշխանութեան միասնական ուժերի։

Սիւնիքի շարժումների մէջ իր յամառութեամբ ու հերոսական դրուագների հարուստ պատմութեամբ առանձնակի տեղ է բռնում Ցուրա բերդի բնակիչների դիմադրութիւնը։

Ինչպէս տեսանք, Տաթեւի վանքի նաւակատիքի հանդէսից, վանքը՝ բազմաթիւ այլ կալուածքների հետ մէկտեղ դահերէց Աշոտ իշխանից նաեւ նուէր է ստացել այս Ցուրա բերդը։ Բայց «հայրենատէր» գիւղացիները հրաժարուեցին իրենց իրաւունքները ոտնահարող հրամանին ենթարկուելուց եւ դուրս չեկան իրենց բնակավայրերից։ Աւելին՝ «ի ժամանակս Սմբատայ՝ որդւոյ Աշոտոյ» նը-բանք «բազում ու մեծամեծ վիշտս հասուցանէին սուրբ ուխտին Տաթեւոյ»։ 915 թուականին, մի դիշեր, գիւղացիները կազմակերպըւած ձեւով յարձակւում են Տաթեւի վանքի վրայ, կողոպտում են եկեղեցին, կրօնաւորների բնակարանները, սպանում եւ վիրաւորում են հոգեւորականներից մի քանիսին, իրենց հետ տանում են մեռոնով լի սափորը, խփում ժայռերին եւ թափում սուրբ հեղուկը («վայթեցին ընդ քարն»)։

---

16) Ստ. Օրբէլեան, էջ 229։

Յովհաննէս եպիսկոպոսը, որը գիշերը վանքում չլինելով վրկուել էր դիւղացիների դատաստանից, միւս օրը գալով վանք, տեղեկանում է կատարուածի մասին, նզովում է ցուրաբերդցիներին, բայց չի վստահում այլեւս ընակուել վանքում։ Հաւաքելով վանքի սրբութիւնները եւ մնացած միաբաններին «ել եւ գնաց յօտար աշխարհ»։

Սիւնեաց իշխան Սմբատը լսելով այս մասին, հաւաքում է իր շուրջը Սիւնիքի իշխաններին եւ կազմակերպուած արշաւանք դրծում Ցուրա բերդի ընակիչների դէմ։ Աւատապետական զինուած ուժերը դաշինք կազմած եկեղեցու հետ, տմարդի միջոցներով կոտորում են ցուրաբերդցիների դիմադրութիւնը, ոչնչացնում շատերին՝ «մեծամեծ պատիժների ու պատուհասների» միջոցով հալածելով նրանց իրենց հայրենի ընակավայրերից, կալուածքը յանձնում են «ի սեպհական ժառանգութիւն եկեղեցւոյն»։

Բայց անէծքներն ու նզովքները անկարող էին սանձել բողոքի ու սոցիալական պայքարի այն եռանդը, որ կրում էին իրենց մկաններում Ցուրաբերդի դիւղացիները։ Որոշ ժամանակից յետոյ, երբ Տաթեւի վանքը թոյլատրում է, Ցուրաբերդը նորից վերաշինւում է, վերադառնում են նախկին տէրերը՝ հալածուած ու վտարուած դիւղացիները, եւ շարունակում են իրենց պայքարը ընդդէմ կղերականութեան։ Ապստամբներին յաջողւում է նոյնիսկ սպաննել Տաթեւի Յակոբ եպիսկոպոսին եւ պաշտպանել իրենց տնտեսական ու սոցիալական իրաւունքները։ Յակոբի յաջորդը՝ Գրիգոր եպիսկոպոսը դիմում է Սիւնեաց Վասակ թագաւորին, ապստամբութիւնը ճնշելու համար։ Սիւնեաց իշխանները դարձեալ զինուած ուժերով յարձակւում են Ցուրաբերդի վրայ։ Ինչպիսի դիմադրութիւն են ցոյց տալիս Ցուրայի պաշտպանները եւ ինչ հսկայական կորուստների գնով է յաջողւում իշխաններին ընկճել նրանց դիմադրութիւնը, մենք չգիտենք։ Պատմիչը ժլատ կերպով գրում է միայն, որ Վասակը հրամայում է բերդը հիմնայատակ կործանել եւ «բնուին ի բաց ջընջել զտեղի բերդոյն»։ Ցուրաբերդցիների այս վերջին անհաւասար կռիւը պէտք է որ տեղի ունեցած լինի 998 թուից մէկ-երկու տարի ետք, ուստի Սիւնիքի դիւղացիների պայքարը ընդդէմ հոգեւորականութեան եւ ողջ ֆէոդալական դասակարգի, որոշ ընդհարումներով, մակընթացութեամբ եւ տեղատուութիւններով տեւել է շուրջ մէկ դար, 906 թուից մինչեւ Ժ. դարի վերջը։ Ժ. դարի կէսերից թոնդրակեան շարժման կոնկրետ արտայայտութիւնների ու դիւղացիական ընդվզումների մասին մեզ հասել են մի քանի ակնարկներ ու կողմնակի վկայութիւններ։ Այսպէս օրինակ, յայտնի է, որ Սմբատի աշակերտներից Կիւրեղը բազմաթիւ հետեւորդներ է գտել թու-

լայլ աւանում (այստեղ էլ առաջացել է Թոնդրակեցիների մի հատուածի Թուլայլեցի կոչումը), այնուհետեւ շարժման դաղափարները խոր արմատներ են ձդում Խնուսում (Խնուսի Թոնդրակեցիները բացառիկ յամառութեամբ հաւատարիմ են մնացել իրենց դաղափարներին մինչեւ ԺԹ. դարը) եւ մի շարք այլ դաւառներում։ Բայց այս երկրորդ շրջանի ընորոշ կողմը այն է, որ շարժմանը սկսում են միանալ նաեւ տիրող դասակարդերի ցածրաստիճան հոդեւորականներ, մանր ազնուականութեան որոշ ներկայացուցիչներ, մտաւորականներ եւ այլ խաւեր, որոնք երկիրեղկում, պառակտում են շարժումը երկու միմեանց արմատականօրէն տարբեր ուղղութիւնների։

Այս շրջանում Թոնդրակեան աղանդին միանալու մէջ մեղադրւում են եկեղեցու այնպիսի դործիչներ, ինչպիսիք են Գրիդոր եւ Անանիա Նարեկացիները, Կճաւայ վանքի (Վասպուրական) միաբաններից մի քանիսը եւ եկեղեցական այլ դործիչներ։

Մանր ազնուականութեան ներկայացուցիչները միանալով շարժմանը, ցանկանում էին ժողովրդական յեղափոխական յուղումները ուղղել իրենց դասային նեղ շահերի օդտին, այն է՝ եկեղեցական հողատիրութեան հաշուին վերականդնել տնտեսական իրենց նախկին հզօրութիւնը եւ իրենց դասի տնտեսական աստիճանական անկման առաջն առնել։ Միանալով շարժմանը, իրենց ուրոյն տնտեսական ու քաղաքական խնդիրներով, շարժման այդ նոր մասնակիցները անշուշտ թուլացնում էին Թոնդրակեան յեղափոխական թափը։ Սակայն նրանց շարքերից երբեմն դուրս են դալիս այնպիսի դէմքեր, որոնք իրենց հիմնական դաղափարներով ու դործելակերպով կարողանում են խդել կապերը իրենց միջավայրի հետ եւ հանդէս դալ որպէս ժողովրդական լայն զանդուածների սոցիալական ու տնտեսական ձդտումների իրականացման համար մղուող մարտերի քաջարի մասնակիցներ ու ղեկավարներ։

Ժ. դարի վերջին Հայքում յայտնի էր Յակոբ անունով մի եպիսկոպոս։ Այդ Յակոբն իր ճդնաւորական կենցաղով, խիստ բարքերով եւ առաքինութեամբ «ի զարմանս շարժէր զհեռաւորս եւ զմերձաւորս»։ Նա այնպիսի հեղինակութիւն է ձեռք բերում, որ Լաստիվերտցու արտայայտութեամբ, եթէ նոյնիսկ հրամայէր «զհոդիս հանեալ» ոեւէ մէկը չէր ընդդիմանայ նրան, այլ սիրով կը կատարէր նրա հրամանը։ Յակոբը հիանալի քարոզիչ էր եւ իր ճարտար լեզուով «կախարդեց զբազմաց լսելիս»։ Հարքում ձեռք բերելով բազմաթիւ համախոհներ, նա սկսում է իր դործունէութիւնը ընդդէմ պաշտօնական եկեղեցու։ Նախ սկսում է անարժան քահանաներին կարդալոյծ անել եւ նրանց փոխարէն առաջ քաշել իր մարդ-

կանց։ Կարդադրում է տարուայ ընթացքում կատարել միայն երեք պատարագ, հիմնաւորելով իր այս կարգադրութիւնը Սմբատ Զարեհաւանցու ուսմունքի զինանոցից հանած այն արմատական դրոյթով, որը իւրաքանչիւր ոք իր կենդանութեան օրօք պէտք է քաւի իր մեղքերը, կամ ընթանայ ուրիշ ճանապարհով, իսկ մահուանից յետոյ նրա հոգու փրկութեան համար արուող պատարագներն ու մատաղներն աւելորդ եւ անիմաստ միջոցառումներ են։ Հայոց եկեղեցին երկու անգամ մեծ ժողովներ է գումարում Յակոբին կարգալոյծ անելու եւ պատժելու համար, սակայն Յակոբը չի ներկայանում ժողովին, իսկ «իշխանք դաւառին – յայտնում է պատմիչը –, խոստանային պատերազմի օրինակաւ մեռանել յառաջ՝ քան թէ դնա, ի ձեռս ժողովոյն տալ»(17)։

Բայց Յակոբը շուտով դառնում է ստոր մատնութեան զոհ, նրան միացած կրօնաւորներից մէկը՝ Եսու անունով, գնում է այն ժամանակուայ կաթողիկոս Սարգսի մօտ (992–1019 թթ.), մանրամասնօրէն պատմում նրա բոլոր ծրագրերը եւ մատնում նրան։ Յակոբին կարգազուրկ են անում եւ աղուէսաղբոշմ են խարանում ճակատին, եւ նետում բանտ։ Հետագայում փախչելով բանտից, Յակոբը գնում է Խլաթ լեռը եւ իր համախոհների հետ զինուած պայքար մղում տիրող կարգերի դէմ։ ԺԱ. դարի սկզբին թոնդրակեան գաղափարները տարածուել ու արմատաւորուել էին Հայաստանի տարբեր շրջաններում։ Չկար շարժման ղեկավարութեան միասնական կեդրոն, ընդհակառակը, ամէն մի շրջան գործում էր ինքնուրոյն ձեւով, մի տեղ շարժման ղեկավարութիւնը գտնւում էր աւատապետական կարգերը յեղափոխական ճանապարհով վերափոխելու կողմնակիցների ձեռքում, մի այլ տեղ իշխում էին բարեկարգումի ջատագովները։

Թոնդրակեան գաղափարների տարածման միւս կարեւոր օճախը Եկեղեաց Նահանգի Մանանաղի գաւառն էր։ Այնտեղ բորբոքուած հրդեհի մասին նորից տեղեկութիւն է հաղորդում Ա. Լաստիվերտցին։ Շարժումը սկսում է ազգով աղուան մի աբեղայի աշակերտած՝ Կունծիկ աբեղայի քարոզչութեամբ։ Կարճ ժամանակում Կունծիկին յաջողւում է իրեն գաղափարակից դարձնել Հրանուշ անունով մի աղնուականի տիկնոջ, իսկ նրա գործակցութեամբ նաեւ Ախնի եւ Կամարա աղնուական քոյրերին։ Շուտով սրանց եղբայր Վրվէռը, որ մինչ այդ «յառաջադէմ էր ի հանդէս բարեպաշտութեան» եւ նոյնիսկ իր կալուածքում կառուցել էր վանք ու հաւաքել «ճգնաւոր եղբայրս», նոյնպէս միանում է աղանդաւորներին։ Վե-

17) Ա. Լաստիվերտցի, էջ 148։

բոյխշեալ իշխանների կալուածքների ու գիւղերի բոլոր բնակիչները միանում են շարժմանը եւ սկսում են աւերել իրենց սահմաններում գտնուող եկեղեցիներն ու սրբավայրերը, կոտրում են խաչքարերը եւ վռնդում տեղի հոգեւորականներին: Տեղի եպիսկոպոս Սամուէլն իմանալով այդ մասին, իր շուրջն է հաւաքում հոգեւորականների եւ կողմնակիցների մեծ բանակ եւ արշաւում Վրվէռի իշխանանիստ գիւղը, հրդեհում է այն, աւերում եւ ձերբակալելով աղանդաւորների վեց առաջնորդների, աղուէսադրոշմ է խարանել տալիս նրանց դէմքին ու նզովում:

Թոնդրակեցիների վերջին ելոյթը տեղի է ունենում դարի կէսերին, շարժման բուն կեդրոնում՝ Ապահունեաց գաւառում:

Գրիգոր Մագիստրոսը՝ Միջագետքի կուսակալը, բիւզանդական ու հայկական զօրքերի գլուխ անցած յարձակւում է շուրջ երկու հարիւր տարի հայ աւատապետական բանակը ահ ու սարսափի մէջ պահող Թոնդրակեան շարժման օրրանի եւ ամենաուժեղ կեդրոնի վրայ:

Հրի ու սրի միջոցով 1052 Թուականին ճնշւում է Թոնդրակեցիների շարժումը: Պայքարի ելած հազարաւոր անվեհեր մարտիկներ զոհւում են այդ անհաւասար կռւում:

Թոնդրակեցիների քարոզած գաղափարներից եւ շարժման ընթացքից գալիս ենք այն համոզման, որ յանձինս Թոնդրակեցիների, հայ միջնադարում մենք գործ ունենք ոչ թէ նեղ աղանդաւորների եւ աղանդաւորական շարժման հետ, այլ հայ եկեղեցու եւ աւատապետական կարգերի դէմ ուղղուած աշխատաւորական լայն շերտերի (եւ առաջին հերթին գիւղացիութեան) յեղափոխական շարժման հետ:

Թոնդրակեանները պայքարելով աւատապետական կարգերի եւ եկեղեցու դէմ, կարծում էին, որ կը կարողանան ստեղծել բոլոր աշխատաւորների համար ազատ կեանքի եւ իրենց իսկ կողմից ստեղծուող նիւթական բարիքների հաւասար բաշխման իրաւունքի պայմաններ:

Թոնդրակեցիներին ի հարկէ չյաջողուեց եւ չէր էլ կարող յաջողուել իրականացնել իրենց սոցիալական երազանքը եւ որեւէ յաղթանակի հասնել: Այդ շարժումը անողոքաբար ճնշուեց տիրող դասակարգի կողմից, որովհետեւ նրա դէմ ծառացան աւատապետների եւ հոգեւորականների կազմակերպուած ուժերը, որովհետեւ գիւղացիութիւնը մենակ էր այդ անհաւասար գօտեմարտում, չունէր դաշնակից եւ ղեկավար ուժ:

THE MOVEMENT OF THE TONDRAKE COMMUNITY FROM THE 9TH CENTURY TO THE 11TH

VARTKES HAMAZASBIAN

(Summary)

During the reign of the Bagratooni rulers, from the 9th century to the 11th, newer interrelations of social classes paralleled the economic progress in Armenia. Besides the nobility and the great traders, individual clergymen and convents received ownership of vast lands and riches on the one hand, and on the other, the rural masses and craftsmen rose in conflict against the nobility and the clergy under the cover of religious movements or in overt uprising. Of these rebellious movements, equipped with religious profession, the one outstanding was that of the Tondrake community, whose founder and ideologist was Sempad of Zarehavan, from the village of Zarehavan in the province of Dzalgotn. Sempad of Zarehavan and his followers waged bitter war against the religious leaders and rejected most of the ecclesiastical rites and religious traditions, such as baptism, marriage, communion, mortuary feast for the poor, requiem ceremony, etc., which, according to the ideology of the Tondrake community, mainly enhanced the material prosperity of the church and its leaders. The people of Tondrake professed the omnipresence of God and rejected materialism. They knew no discrimination between men and women, and allowed the latter to preach. In the 10th century, the ideology of the Tondrake community won great popularity, even in the ranks of the nobility and the clergy. Soon, however, the nobility and the clergy contrived against the Tondrake community a warfare that found its cruellest perpetration in Sunik. After engaging in ideological and armed conflict for two hundred years, the Tondrake community was peremptorely defeated in 1052 at the hands of the armies of the governor of Mesopotamia, Gregory Magistrus.